



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՆՅՈՒԹԵՐԸ

Ինչպե՞ս են գործում պատվաստանյութերն ընդհանրապես

Պատվաստանյութերը գործում են՝ պատրաստելով ձեր մարմնի բնական պաշտպանական մեխանիզմները՝ ճանաչելու այն մանրէները, որոնք կարող են ձեզ հիվանդացնել, և դրանց դեմ պայքարելու համար: Պատվաստանյութերը կարող են պարունակել՝

- Մանրէների մահացած կամ թուլացած տեսակներ:
- Նյութեր, որոնք նման են մանրէների մասնիկների:
- Նյութեր, որոնք մարմնին սովորեցնում են արտադրել սպիտակուցներ, որոնք նման են մանրէի մասնիկների:

Երբ դուք պատվաստվում եք ցանկացած պատվաստանյութով, ձեր իմունային համակարգը արձագանքում է դրան՝

- Արտադրելով հակամարմիններ: Սրանք սպիտակուցներ են, որոնք բնական կերպով արտադրվում են իմունային համակարգի կողմից՝ պայքարելու հիվանդության դեմ:
- Պատրաստելով ձեր իմունային բջիջները՝ արձագանքելու հետագա վարակին:
- Հիշելով հիվանդությունը և դրա դեմ պայքարելու ձևը: Եթե պատվաստվելուց հետո վարակվում եք տվյալ մանրէով, ձեր իմունային համակարգը կարող է արագ ոչնչացնել այն և կանխել ձեր վարակվելը կամ ծանր հիվանդանալը:

Ինչպե՞ս են գործում COVID-19-ի դեմ պատվաստանյութերը

Տվյալ պահին ԱՄՆ-ում հասանելի COVID-19-ի դեմ բոլոր 4 պատվաստանյութերը գործում են՝ սովորեցնելով մեր իմունային բջիջներին ինչպես ստեղծել հասկ-սպիտակուցներին նմանեցված սպիտակուցներ (COVID-19-ի վիրուսի մակերևույթին գտնվող թագանման հասկեր՝ spike proteins): Հասկ-սպիտակուցի ստեղծումը չի վնասում մեր բջիջները:

- Մեր իմունային համակարգը նկատում է հասկ-սպիտակուցը և հասկանում է, որ այն օտար է:
- Մեր մարմինները հակազդում են՝ ստեղծելով իմունային արձագանք: Մեր մարմինը ստեղծում է հակամարմիններ, որոնք կարող են գործել COVID-19-ի վիրուսի հասկ-սպիտակուցի դեմ, ինչպես նաև նախապատրաստում է իմունային բջիջները: Սա կպաշտպանի մեզ, եթե ապագայում վարակվենք այդ վիրուսով:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը տարբերվում են նրանով, թե ինչպես են մեր բջիջներին սովորեցնում ստեղծել հասկ-սպիտակուցներ.

- Pfizer-ի և Moderna-ի կողմից պատրաստված պատվաստանյութերը կոչվում են իՌՆԹ (mRNA) պատվաստանյութեր: Ինֆորմացիոն (նաև՝ տեղեկատվական) ՌՆԹ-ն (Messenger RNA-ն կամ mRNA) գենետիկ նյութ է, որը մեր մարմնին ասում է՝ ինչպես ստեղծել սպիտակուցներ: Պատվաստանյութում պարունակվող իՌՆԹ-ն փաթաթված է յուղոտ պղպջակներով (հայտնի՝ որպես լիպիդային նանոմասնիկներ): Երբ իՌՆԹ-ն ներթափանցում է մեր բջիջներ, այն մեր բջիջներին սովորեցնում է՝ ինչպես ստեղծել հասկ-սպիտակուցի պատճեններ: իՌՆԹ-ն (mRNA) չի ներթափանցում բջջի միջուկ և որևէ կերպ չի փոխազդում ԴՆԹ-ի հետ:
- J&J/Janssen-ի կողմից պատրաստված պատվաստանյութը կոչվում է վիրուսային վեկտորի պատվաստանյութ: Վեկտորը (կամ վարակը տարածողը) գենետիկ նյութը





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ

հասցևում է մեր բջիջներ: Մեր բջիջները կարդում են գենետիկ նյութը և արտադրում են իՌՆԹ (mRNA), և այդ իՌՆԹ-ն մեր բջիջներին սովորեցնում է արտադրել հասկ-սպիտակուց: Վիրուսային վեկտորը սովորական մրսածության վիրուսի անվնաս տարբերակ է: Այն չի կարող վերարտադրվել մեր բջիջների ներսում և չի կարող որևէ կերպ փոխել մեր ԴՆԹ-ն:

- Novavax-ի կողմից պատրաստված պատվաստանյութը կոչվում է սպիտակուցի ենթամիավորային պատվաստանյութ: Այն պարունակում է հասկի սպիտակուցի կտորներ: Պատվաստանյութը պարունակում է նաև «օժանդակող նյութ»՝ մարմնի իմունային արձագանքն ուժեղացնելու համար: Օժանդակող նյութերը (adjuvant) օգտագործվում են բազմաթիվ պատվաստանյութերում:

COVID-19-ի դեմ այս պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19 վիրուս որևէ ձևով՝ կենդանի, թուլացած կամ մահացած: Դուք չեք կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութերից:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տպագրելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19 -ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես Պատվաստվել](#):
- CDC-ի՝ [Հասկանալով, թե ինչպես են գործում պատվաստանյութերը](#) կայքէջ
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

